ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<03 >> սեպտեմբերի 2013թ. N: 218-Ա գ.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի N 213-Ա ԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի N 04-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1180-Ն որոշմամբ հաստատված «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման» կարգի 20-րդ և 22-րդ կետերի դրույթներով, արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման պլանավորման, նախապատրաստման և անցկացման ապահովումն իրականացնելու նպատակով.

Որոշում եմ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության տարահանման հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հանձնաժողովի կազմում ստեղծել աշխատանքային խմբեր՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Հաստատել Հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն N 3 հավելվածի:

4.Հանձնարարել Հանձնաժողովի նախագահին՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության հետ համատեղ կազմել <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման>> մարզային պլանը և մինչև 2013 թվականի հոկտեմբերի 31-ը ներկայացնել հաստատման.

2) մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 20-ը կազմել Հանձնաժողովի հաջորդ տարվա աշխատանքային պլանը:

5. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին և մարզի տարածքում գործող՝ անկախ կազմակերպական-իրավական ձևից, կազմակերպությունների ղեկավարներին՝

1) Ստեղծել՝

ա. համայնքային և օբյեկտային տարահանման հանձնաժողովներ.

բ. համայնքային տարահանման-ընդունման հավաքակայաններ.

գ.ժամանակավոր տեղակայման կետեր.

դ. երկարատև բնակության կետեր.

2) Որոշել տարահանման հավաքակայանների տեղակայման վայրերը և աշխատանքային խմբերի կազմերը, մշակել տարահանման-ընդունման հավաքակայանների կանոնադրությունները, ղեկավարման մարմինների պարտականությունները և դրանց հաստատման վերաբերյալ եռամսյա ժամկետում ընդունել համապատասխան որոշում:

6. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի հուլիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային տարահանման հանձնաժողով ստեղծելու մասին» N 213-Ա և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային տարահանման հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» N 04-Ա որոշումները:

7. Սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման և կատարման պատասխանատվությունը դնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ, Հանձնաժողովի նախագահ Սեյրան Պետրոսյանի վրա:

Իսկականի հետ ճիշտ է

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2013 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 218-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Սեյրան Պետրոսյան-հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ,
Կառլեն Աբրահամյան- հանձնաժողովի նախագահի տեղակալ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ,
Հակոբ Հարությունյան-հանձնաժողովի քարտուղար, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ,

Հանձնաժողովի անդամներ՝

Լիպարիտ Մարտիրոսյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ,
Ալբերտ Մարգարյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ,
Մովսես Մանուկյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ,
Սահակ Մինասյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության պետ,
Հովհաննես Հովհաննիսյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,
Կարեն Բաբակեխյան-Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետ
Հենրիկ Նալբանդյան-<<ԱրմենՏել>> փակ բաժնետիրական ընկերության արևմտյան տարածքային կենտրոնի տնօրեն,
Գագիկ Ֆարզադյան-<<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> փակ բաժնետիրական ընկերության <<Ղարս>> մասնաճյուղի տնօրեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2013 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 218-Ա որոշման

ԿԱԶՄԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ

1.ՎՏԱՆԳԱՎՈՐ ՏԱՐԱԾՔԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴՈՒՐՍ ԲԵՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԽՈՒՄԲ

Մարզպետունի Մարգարյան- խմբի ղեկավար, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ,

Խմբի անդամներ՝

Սամվել Քոչարյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի գլխավոր մասնագետ,

Արամ Անտոնյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի գլխավոր մասնագետ,

Սուրեն Ավետիսյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ,

Զորիկ Խաչատրյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ:

2. ԱՆՎՏԱՆԳ ԳՈՏՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԽՈՒՄԲ

Գևորգ Ղումաշյան- խմբի ղեկավար, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ,

Խմբի անդամներ՝

Արմեն Ստամբոլցյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ,

Գոռ Մարգարյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ,

Արթուր Գրիգորյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ,

Սամվել Մարտիրոսյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ:

3.ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՈՒՄԲ

Խաչատուր Խնձրցյան- խմբի ղեկավար,Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ,

Խմբի անդամներ՝

Գագիկ Հարությունյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ,

Մամիկոն Համբարձումյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ,

Աշոտ Հախվերդյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի գլխավոր մասնագետ,

Համազասպ Մարտիրոսյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի առաջատար մասնագետ:

4.ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԽՈՒՄԲ

Դանիել Վարդանյան- խմբի ղեկավար, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

Խմբի անդամներ՝

Արտավազդ Գևորգյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

Արմեն Դավթյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

Վարդան Սահակյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժն առաջատար մասնագետ,

Արմեն Հարությունյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության առաջատար մասնագետ:

5. ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԵՐԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ԳՈՏԻ ԴՈՒՐՍ ԲԵՐՄԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԽՈՒՄԲ

Հայկուշ Ավետիսյան- խմբի ղեկավար, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ,

Խմբի անդամներ՝

Լուսինե Մովսիսյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետ,

Էդվարդ Ալեքսանյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի առաջատար մասնագետ,

Տաթևիկ Հարությունյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի առաջատար մասնագետ,

Լիանա Գրիգորյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի առաջին կարգի մասնագետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Խ. ՊՈՂՈՍՅԱՆ